

ԼՈՐԶ ՊԱՅՐԵՆ ԷԱՅՈՑ ՄԵՋ



Արդ ընդհեւալ եմ ի լուր այլախօսիկն լեզուաց
(Ստարաբան լեմ ես յայսմեանս առ աշտ օտարին,
«Պանդխտութիւն Հարոյրաց ասպետի».) (ԽԱԼԻԼԻ)

Y've taught me other tongues-and in strange eyes
Have made me not a stranger;...

«Childe Harold's pilgrimage»

Այսպէս կ'երգէ Լորտ գերահռչակ հանճարը «Խալաիլ»-ին մէջ. և ո՞վ պիտի տարակուսի թէ այդ այլախօսիկ լեզուներէն մինն է հայեւրէնը. նա կը խոստովանի թէ օտարին քով օտար չէ. հայերն են անշուշտ անոնք իրեն ծանօթ ու մտերիմ ժողովուրդ դարձած՝ Մխիթարեաննեւրուն ձեռքով. Արևմուտքի հանճարներուն մէջ միակն է որ այնքան սէր և զմայլանք և մտերիմ յարաբերութիւններ ունեցած է հայուն հետ, այն օրէն՝ երբ ոսք դրաւ փոքրիկ Հայաստանի հողին վրայ — Վենետիկոյ լճակին մէջ — այն օրէն զմայլանքին հետ անխզելի կապ մը, միութիւն մը գոյացաւ անոր և հայութեան միջև:

Եթէ դիցուհին Վենետիկ հրապուրեմ էր զինքը իր դիւթիական գեղով, սակայն այդ մեծ միտքը, վառվառուն երևակայութիւնը, անուսուպ սիրով վրդովեալ հոգին կարծես միշտ իր հետ կը տանէր իր «Երկիրնք և երկիր»-ը. կը բարձրանային իր հոգեւոր մէջ իր նկարագրած անպապա հոտանքնեւրը, այլախօսի իր հեղեղովն հանգումն կը գրաւէր, կը զերէր հոն ալ իր սիրտը ու նա կ'ստով ընկերված այդ հեղեղին մէջ՝ երբ իր աչքերը պիշ պիշ տապանը կը փնտնէին... տեսաւ փոքրիկ Հայաստանը ու անոր մեծ «Ալեոս ամառ», հրսկայ, մենասէր» Արարատը գոր այնքան երգէր էր. տեսաւ և երագեց երջանկաբան կղզին. ու օր մը լուսաբացին, երբ աստղերը դեռ նոր կը փակէին իրենց բիւրերը գիշերական երկար հսկում մէջ վերջ, մեծ ու քերթաղ Լորտն ալ միշտ աստղերուն հետ հսկող, քրեզակին ամառին նշուշներով հասաւ խաղաղութեան վայրը. բաղնից Հայոց մենաստանին դուռը... բացուեցաւ ան և իսկոյն խաղաղութիւնն և երջանկութիւն կարծես համբոյր մը տուին անոր ճակտին... ու սիրեց ապրիլ հոն. ամէն առտու նոր անձուկով, նոր տենչանքով մ'էր որ կ'ողջունէր «Հայոց կղզին» ինչպէս կ'անուանէ Վենետիկին:

Գերտի հոս մէջ բերել իւր իսկ տողերը, որոնց մէջ եթէ Մխիթարեանցս վրայ գովեստ ալ ըլլայ, է այն իբրև ազգին ներկայացուցիչներուն որով պարծանքը միշտ հայուն է:

«Աս ժամանակները, կ'ըսէ նա, ես կը հիւանայի, ինչպէս ամէն ուղևորները, Ս. Դազարու Միքայելայեան կրօնաւորներուն վրայ, որոնք լիուրի ունին մենակեցական հաստատութեան մը ամէն բարեմասնութիւնները և անմասն են անոնց թերութիւններէն»: Եւ յետ անոնց առաքինի, չքնաղ կենանքը դրուատելու կ'աւելցնէ «Աստղ (Մխիթարեանները) քահանայներն են հարստահարած բայց առատամիտ ազգի մը՝ որ բաժանորդ հղաւ Հրէից և Հելլեն».

ներու տառապանքին ու գերութեան, բայց անառատ ծաղ Հրէից խոստարտութենէն և Հելլեններու անարգ վատութենէն. առանց վայելի և տոկոսի հարստացաւ և լիացաւ այն ամէն փառքերով որ կարելի է ունենալ գերութեան մէջ առանց խաբկանքի... Ինձ դժուարին կը թուի ազգերու յիշատակարաններ գտնել որոնք գերը ըլլան մեծ հեղեղներ ինչպէս հայերուն... որովհետեւ անոնց առաքինութիւնները խաղաղութեան արգասիք են, և թերութիւնները՝ բռնադատութեան արդեւոր...» (Եւ այսպէս նա Արևմուտքի ազգերուն կը պատկերացնէ հայը թշուառ բայց առաքինի և կարեկցութեան արժանի՝ բարոյական բարձր և անբասիր նկարագրին համար:

Ազգը դրուատելէն յետոյ Հայոց երկիրն ալ փառքերով կը պնէ. «Անոնց աշխարհը բոլոր տիեզերքին մէջ պիտի տէն ու ծաղ միշտ իբրև ամենէն պատուականը». ու կը թուէ անոր առանձնաշնորհութիւնները, եղեմական Դրախտը, հոն Հրէեկեղեղին Նուրերուն դաղարումը, աղանդին ոտքին ամառլին հանգիստը:

Աստղ 1817ին գրածներն են, անկէ առաջ առ Պ. Մլոր գրելով՝ կ'իմացնէ թէ «Ջրօսնորու համար Հայոց լեզուն կը ստովմ Հայոց Մենաստանին մէջ» ու միշտ իր դժուարութիւնը կը խոստովանի այդ լեզուին ուսման՝ կը գովէ անոր ճոխութիւնն ու գեղը. հուսկ կը յաւելու տեղեկութիւններ ձեռագիրներու մասին ինչպէս նաև վանքին մատենադարան երկերուն և հրատառութիւններուն:

Գայրեմի ձեռագիր հայերէն ստորագրութիւնը
Byron's autograph in Armenian

Առ Պ. Մլոր գրելով կը հաղորդէ թէ յառաջ կը տանի հայ լեզուի ուսումը Հայոց մենաստանին մէջ «Արդ դաս աննելու կ'երթամ, կ'ըսէ, հմուտ կրօնաւոր մը (Հ. Յարութիւն Ազգերեանէն) և եզակի և ոչ անպէտ տեղեկութիւններ տաճառայ ալք արևելեան ազգին մատենադարան մէջ ու բարբերուն վրայ» և յետ յիշելու մենաստանն ու կրօնաւորներուն թիւը մանրա-

մասնորէն և անոնց ուսումնասիրութիւնը «Անոնք տպարան ալ ունին, կ'ըսէ, և մեծ ջանքով ետեւ են լուսաւորելու իրենց ազգը»:

Այս ամենին կը հետեւի որ Լորտ Պայրըն կա- տարելապէս հայկական հողի և շրջանակի մէջ կ'ապրէր. չատ սիրելի էին անոր՝ յետ իրեն հայ- րենի երկրին՝ հայ ազգը, անոր փառքերը, լե- զուն... նոյն իսկ գարաւոր տառապանքները. և

խորիւստ և արփաթեւ հանճարը չամէն աւելի խոսակաւան գեղանի և յիշատակալից երկրէն ազդուեցաւ, եզական վննետէկէն և հուսկ Ս. Ղա- զարու միայնութենէն ու լուսթենէն՝ առանց զանց ընելու արեւելեան նուրբ և բանաստեղծա- կան մտայնութիւնը, Լորտ Պայրըն սրտի մեծ պապակով ըմբոխնեց մենաւոր վայրին խորա- սոյզ լուսթիւնը. արեւեան տիպարը, նուրբ և

Պայրընի ծնուագիր Անգլ. ստորագրութիւնը

Byron's autograph in English

այս հայկական դերը կամ շրջանը Լորտ Պայրընի բանաստեղծութեան և կեանքի պատմութեան որոտագներէն անբաժան պիտի մնայ:

Ահա «ԼՈՐՏ ՊԱՐԵՆ ՀԱՅՈՑ ՄԵՋ» իմաստին առաջին ու պարզ առումով. ահա Լորտ Պայրըն որ հայրուհի հետ կենակից, անոնց լեզուն կը թոթովէ, լեզու՝ զոր «գեղեցիկ ու ճոխ» կ'ա- նուանէ. և օրեր ու ամիսներ կը շարունակուին այդ պատկերները: Անոր հրաշքովէն կրնանք գուշակել թէ որքան սիրելի էին իրեն և միւ- թարական այդ ամենօրեայ այցելութիւնը, կե- նակցութիւնը, հրահանգները, իր ատած տեղե- կութեան պաշարը արեւելքի մտաւորական և նիւսեական աշխարհին շուրջ, և հուսկ ցանկալի ժամերը անգործութեան, խաղաղութեան և լուս- թեան ծոցը՝ անծայր ու խորին խոհերու մէջ խորասուզուած երջանկութեան կղզւոյն մէջ:

Սակայն վերնագրիս տակ ուրիշ տեսակէտ մ'ալ կայ որ աւելի պատուաբեր է հայուն և հե- տաբերական և զոր շնք կրնար անուսել. այս է՝ հայկական միջնորդութեան ու միջավայրը որուն մէջ կ'ազդուի Լորտ Պայրըն:

«Երբ, ո՛ր, և ինչ տպաւորութեանց տակ ծնան գլուխ գործոցները որ այնքան հիացումն կ'ազդեն». այս հարցման պատասխանած է Գէ- որզ Դուկլաս, Չէմբլէս օրագրին մէջ և շատ մը քերթող կամ վիպասան հեղինակներու հետ Լորտ Պայրընի մասին հետեւեալն ունի. «Պայրըն ժա- մանակ մը կրկնակուեցաւ չամիշով և սէլջը ջրով, միտքը դնելով՝ ինչպէս կ'երևի, որ այս կերպ պահանջողութիւնը նպաստաւոր է գաղափարներու բողբոջման»:

Ինչ ալ ըլլայ Դուկլասի վկայութեան ստու- ղութիւնը կամ արժէքը կրնանք ըսել որ այդ

խորհրդական մտածութիւնը իր քնարին աւելի անոյշ, նուրբ և խորհրդաւոր թրթուում տուին, ինչ որ յայտնապէս զգալի է «Պաղկատորիոն Հարոլդ Սարկի» (CHILDE HAROLD'S PILGRIMAGE) քերթութեան չորրորդ երգին մէջ, զոր Հ. Ալիշան «Իտալիա» վերնագրով թարգմանեւ որ հրատարակեւ է:

Այն ժամանակ երբ վննետէկ ջուրերուն վրայ կը ծփար իր բախտին և հանճարին լաստափայտը, Ս. Ղազարու դիւթական կղզւոյն մէջ երազեց ու երգեց այնքան ներդաշնակ ու չքնաղ թըր- թոռմով իր գլուխ գործոցը, ինչեւլ քերթութեան չորրորդ երգը՝ գեղեցիկն «Իտալիա» խորհրդա- կան նրբութեամբ, հայրենիքի տենչով և սրբա- զան քարեպաշտութեամբ. ահա թէ «Ո՛ր, երբ և ինչ» տպաւորութեան տակ ծնաւ» Լորտ Պայրընի գլուխ գործոցը. — Այս տեսակէտը՝ առանց հանճարին հեղինակութեան վրայ արտա- մը բերելու, առանց աշխարհակալ կղզեցոյն փառքն ստուելու մ'անգամ կապուելու՝ հայուն պարծանք մ'է, անշինջ դրոշմուելու իր յիշա- տակարաններուն մէջ:

Ըսածինս իրականութիւն մ'է. ատոր կը վկայէ Հ. Ալիշան, նոյն ինքն թարգմանիչը Լորտ Պայրընի գլուխ գործոցին, ինչպէս կ'անուանէ «գերտերազոյն մասն համօրէն գրուածոց նո- րին». մեծարժէք վկայութիւն քանի որ արեւ- տակցէ մ'է. մեծ քերթողէ Հոս սակայն շարք մ'ունինք գեղեցիկ գուգադիպութեանց կամ գու- գակչոյի եզրներու երկու հանճարներու միջև որոնք նոյն դարու արեգակներ են: Նախ անոնց դիրքը նոյն դարուն մէջ. երկուքն ալ գերահռչակ հան- ճարներ. յետոյ անոնց փոխարարած պանդխտ- թիւնը. թոզ խօսի ինքն Ալիշան. «(ի վննետէկ) յորում և մասն ինչ երգաց (իտալիա) յօրինեալ է ի բանաստեղծէն և Գլոուիւս ի կղզով մենա- տանի՝ որում նա յաճախ այց ելանէր՝ մինչդեռ պանդուխտ իւր (Հարոլդ ասպետ — Childe

1. Բազմավէպ. 1919. Յոսուսար. էջ. 30-31.

Harold) թափառել տակաւին յաներեւոյթ հրապարակ մտաց իւրոց այս ամենայն.... մերս իսկ նմոցնութիւն (Հ. Աւիշան ինքնին կ'ակնարկէ նմանութիւնը ի հայրենայն անդր քերթողին)։ Ուրեմն ինչ որ Լորտ Պայրըն պանդխտութեամբ ի վենետիկ, Ս. Ղազարու մէջ կը շարադրէր, նոյնը Հ. Աւիշան ՍԱՆՏԱՐԻ, ի Լոնտոն իր պանդխտութեան մէջ կը հայացնէր։

Երրորդ զուգակշիռ մ'ալ նոյն մեծ քերթողներու փոխադարձ հայ և անգղիներէն լեզուները սորվիլն է և երկուքին ալ փոխադարձ դժուարութիւնը. Հ. Աւիշան կ'ըսէ. « Ի հայրենիս անդ քերթողին... գտադտուկ օտարութիւնն այսպիսեւս իմն կամեցայ սփոփիլ կամ տունելի ոչ դիւրաթափ թարգմանութեամբ », հոս ալ նոյնպէս Հ. Աւիշան կը նշմարէ զուգակշիռութիւնը « այնպիսի իմն հնարս հնարաւոր և հեղինակին երբեմն սիրահներ գանձն ի փորձ և ի տոյժ ուսանել զմերս հայերէն դժուարագիտութեամբ քաջառ ի մնում իսկ դրան վանաց »։ Ինչ որ Լորտ Պայրըն ալ յայտնաբերեց « Դժուարին թուի ինձ լեզուն... թէպէտ և ոչ անյաղճելի... յառաջ դիմեցի »։ և այլուր « Ի զբոստան անձին ուսանիմ գէշաց լեզու ի մենատանտիս Հայոց... և զի տեսանեմ քաջ թէ դժուարածնորակի ինչ պիտուի է մտաց » յոր խորտակեցի. և զի աստեանոր դժուարագոյնն է սա ի զբոստան, բնւորեցի խոշտակելի զիս յայն պարապելոյ »։

Լորտ Պայրըն դեռ կ'ապրէ Հայոց մէջ. իր քերթումներուն գրեթէ մեծամասնութիւնը հայացած է. արդէն յիշեցինք « Զայլոյ Հարոյրի ուղեւորութիւնը », որուն Գ. երգը հաճապեող զարբար լեզուով մեզ ընծայէր է. սակայն նոյն գործին երկու ընտիր հատումներ վերջէս աշխարհաբար - ուստիայ լեզուով ալ ունեցանք ընտիր թարգմանութեամբ, Արիւրի 1922ի թուական մէջ. ինչպէս « Վենետիկին - Զայլոյ Հարոյր - ից » Արեգ, Վիեննա 1922. էջ. 287 - 289)։ Արեգ ասոնցմէ զատ իր ընթերցողներուն ներկայացուց նաև « Մանֆրիտ » (Բայրոնի), մաս մաս հրատարակուած 1922ի զանազան թիւերուն մէջ. (Արեգ Ս. տարի. 1922. էջ. 28-40, 82-92, 158-166, 231-244)։

Հետաքրքրական է, ինչպէս որ թարգմանիչն ալ կը նշանակէ (Արեգ. 1922 էջ. 28) որ « Մանֆրիտ » տրամին Ա. և Բ. արարուածներն ի Ջուիցերիա գրուած են 1816 Սեպտ. 17-29. իսկ Գ. արարուածը 1817ին ի վենետիկ, ուր նաև գործին հրատարակութիւնն եղաւ։

Զարգելի թարգմանչին (յիշեալ երկու հատումներուն և « Մանֆրիտ »ի) Պ. Զովհաննէս Մանեանի խնայակից ենք և յաշուութիւն կը մաղթենք յաշուողաբար ընծայելու մեզ մեծ քերթողին դեռ ոչ հայացած երկերը։

Որպացեալ բանաստեղծ Թումանեանի կը պարտիր « Հիլիոնի կայանաւոր » (Թիֆլիս. 1896). ինչպէս Լ. Աբրահամեանի « Գոմ ժուռն » ի թարգմանութիւնը. Ա. Երգ. (Մոսկուա 1894), ունիւր դարձեալ « Երկիր » և երկիր » ը (հատ. Բ. Գրեքեան գրատան. Կ. Պոլիս. 1874. 1911).

և հուսկ՝ յետին տարիներու « Երվանէներ » Թրգ. Միքայելեանի (Թեհրան 1911)։

Ըստիր կտորներ ունին դարձեալ Հ. Աւիշանի թարգմանութեամբ. ամէնքն ալ զարբար հայ - անգլ. հրատարակութեամբ « Lord Byron's poetries, « Լորտ Պայրընի քերթում » խորագրով. գեղեցիկ կտորներն են.

1. - (Խորտառ ըստակին Սենեքերիմայ). The destruction of Sennacherib. - 2. (Ուղիւրս աւ Ովիսիանու). Address to the Ocean. - 3. (Ի Վաշերու). On Waterloo. - 4. (Առ ժամանակ). To Time. - 5. (Տաղ կրգայի ի շարժագ մարկի). Stanzas composed during a thunderstorm. - 6. (Տաւոր Ս. Պետրոսի). Church of St. Peter. - 7. (Ի մահ Որիտորի միոյ ընտրողի քերթողին և սիրելի յոյժ նմա). On the death of a young lady cousin to the Author, and very dear to him. - 8. (Առ դուքս Զորսեդ). To the Duke of Dorset. - 9. (Արտասուք). The tear. - 10. (Յետին տոյժ Պայրընի). On this day I complete my thirty - sixth year).

Ու կը մնան դեռ քանի մը հատ. անշուշտ բախտը կ'ունենանք քիչ առնելն տեսել հայ մատենագրաններու մէջ Սարդանաբաղ » ը.

« Մարին Ֆայրիս » և այլ քերթումները։ Կ'արժէ յիշել հոս Լորտին անձնական հրահանգները հայ լեզուին մէջ. և քանի մը կտորներ հրատարակուած ի Հ. Աւիշանէ, վերոյիշեալ « Լորտ Պայրընի քերթում » հատորին հետ, որոնք հատումներն են հայ հեղինակներէ. ինչպէս նաև կորնթացուց անվաւեր թուղթը (որ մեր մատենագրութեան մէջ գոյութիւն ունին) հայ - և անգլ. լեզուով հրատարակուած « Lord Byron's translations « Լորտ Պայրընի թարգմանութիւն », որոնք հետ կան նաև Լորտ Պայրընի քանի մը նամակներ Ս. Ղազարէն այլուր գրուած։

Առնեցէ զատ պէտք է նաև յիշատակել առ Հ. Զ. Ագրեան ընծայած իր աշակցութիւնները Հայ-Անգլ. ֆերականութեան պատրաստութեան և Անգլ-Հայ ֆերականութեան հրատարակութեան մասին։

Հուսկ նկատեց թէ ինչ է կամ ինչպիսի պիտի ըլլայ Լորտ Պայրընի ազդեցութիւնը հայ բանաստեղծութեան վրայ. Լորտ Պայրըն ինք Մեծն Աւիշանի համեմատ ձիւ. դարուն քերթողներուն « առաջին ի նոսրի վկայից է յովից » անշուշտ նա իր ներշնչումը պիտի ունենայ հայ քերթողին վրայ։

Պայրըն ինքն է իր քերթումներուն մէջ. չեմ գիտեր - բացի Լեորաւորէն - նման քերթումներ ունենա՞ր, որոնք հեղինակին էութեան և զգայուններուն մարմնացում և արտայայտութիւն ըլլան։ Անոր բարոյական աշխարհի անցուղաւոր, ելեւէջը, փոթորիկը գրեթէ ամէն երկրորդին մէջ քանդակուած են. զինքը կը տեսնուի հանդիսին ետեւէ, իր անձերուն տուած դերէն... յուստիանութիւնն է մերջ ցան և խոյզը կը յաշուող... բայց ոչ յուսահատութիւնը. վստահ զի անոր մէջ խորամտան է գերբնականին հաւատքն և յոյսը... անգուսպ սէրն է որ թը-

շուտառ ու գերի ըրեր է իր սիրտը: Մեծամեծ
զգացում մը կը պատէ զիս երբ կարգում «Դոն
ժուան»ը, «Երկինք և երկիր»ը. ու կը կարեն
ցիմ՝ երբ «Ետխաբանէ նա. ծաղիկ զեռափթիթ
որ, աւազ, իր թառամած վիճակը կ'ողբայ.
«Վերջնայաւ ամէնը, ո՛ր սիրտ իմ..... կար ժա-
մանակ՝ որ միակ հարստութիւնն էիր, և ամէնը
քու մէջ էր ամփոփուած. իսկ այժմ՝ դու էլ չես
կարող ոչ երջանկութիւն պարգևել, ոչ ցանկերի
աղբիւրը լինել: Սիրոյ ժամերը անցան, անդարձ
հեռացան ինձանից. թաք բարեւա հրապոյրք...
Մի խօսքով այժմ ես ապրելու չեմ այնպէս ինչ-
պէս ապրած եմ առաջ... երիտասարդութիւնս
մի գանձ էր, որ ես վաղորձ պատկերէի... սիրտս
յոգնել է սիրելուց. զուլիս՝ չափեր յօրինելուց»
(Դոն Ժուան. էջ. 88-90):

Այդ թափուր և յուսաբաբ սրտէն կարծես
յուսահանոց ճիւղեր պիտի լսէինք. ոչ. ինչպէս Ը-
սինք, զեռ իր սրտին ունայնութեան անզուս-
դին մէջ կը ճանաչէ հաւատքը յոյսի դալար
ոստիկ վրայ. «Եթէ քու սիրտը կը տրտնջէ,
զէ՛ծ լեզուդ թող չմիայնանէ քու Աստուածդ:
Ապրէ՛ ինչպէս նա կը պահանջէ. մեռիր երբ նա
կը հրամայէ, արդարոց մահուամբը և ոչ կայե-
նի ցեղին նման». (Երկինք և երկիր. էջ 35-36):

«Ինձ կենաք տուաւ (Աստուած), իմ՝ կենսքս
իր պարգևն է. և կ'առնու յինչէն ինչ որ իւրն է.
և եթէ իմ աչքս զոգուին առ յաւտ, եթէ իմ
տկար ճայնա ալ չկարենայ լսուիլ իր գանձին
առջև, օրհնեալ ըլլալ Տէրն այն ամէն բանին
համար որ եղած է ու կ'ըլլայ, վասն զի ամէն
բան իւրն է, ժամանակը... միշտը... յափտե-
նականութիւնը... կենսքը, մահը... կը մեռնիմ
ինչպէս ապրեցայ... հաւատքով... և անյողողող
պիտի թաւա թէպէտ համայն տիեզերք հիմն ի
վեր տապալիք» (Երկինք և երկիր. էջ. 42):

Սակայն Լորտ Պայրըն իր անձին արտայայ-
տութենէն զատ գերազանց յատկութիւն մ'ալ
ունի. բնութենապաշտ քերթողն է ան, ինչպէս
ինքն իսկ շատ տեղ կ'արտայայտուի.

«Գմարդիկ չատեմ, յաւէտ սիրեմ զբնութիւն»
«(I love not Man the less, but Nature more)»
(Ողերս՝ առ Ովկիանոս — Adres to the Ocean)
ևւ այլուր

«Զանձն իմ խառնել ընդ տիեզերս և զգալ» (անդ)
«To mingle with the universe, and feel»
(ibidem)

ևւ դարձեալ

«Զի պարարել ըզհանճար տվորութիւն արարի
Տեսեամբ բնութեան ի դաշտի քան յարուեստից
(տեսլավայր)

«Պանդիտ. Հարուդայ Ասպետի» (խաւիխ).

For I have been accoston' d to entwine
My thoughts with Nature rather in the fields
Thau Art in galleries...

Childe Harolds P. Grimage

Խորթափանց է իր միտքը, յստակ՝ տեսու-
թիւնը. խորհրդականին ու վերաշուականին հետ
զարմանալի կերպով խառն է իրականութիւնը:

Տեսեր է հրաշալիք մը ու անոր պատկերը կը
քանդակէ

«Անգղութիւն, մեծութիւն և փառք և գեղ
աստանայ

Համախմբեալ ընդ յարկաւոյ յանրժական տա-
լրածին».

Majesty

Power, Glory, Strenght an Beaty, all are
jailed

և ո՞վ կրնայ չյիշել վատիկանեան բլրին վրայ
սուահանող գմբեթարդ վեհաժայրը: Ի՛նչ ալ ըլ-
լայ իր անձնական զգացումն ու կրօնական հա-
մոզումը, նա իրականութեան նկարին է, կ'ար-
տայայտէ ինչ որ կ'ազդէ պատկերը իր ամէն
նրբերանգնեղուն մէջ. չեմ գիտեր մեծութիւն
թէ վեհութիւն, պերճութիւն թէ սրբութիւն
նշույնը են անոր մտքին այս ոսկեղէն զգա-
ցունները...

«Ուր սուրբ ու անխառն պաշտի ճշմարտու-
թիւն երկնաւոր»

«In this eternal ark of worship undefiled».

Կը յիշեմ մեր ազգայիններէն մէկուն նկարա-
գիրը որ մեզ կ'ընէր Ս. Պետրոսի, իբրև թէ վիթ-
խարի քարակոյտ մ'ըլլայր քանի մը ճարտարա-
պետական գծերու բարդութեամբ, մինչդեռ Լորտ
Պայրըն ինքնիմէ՛ զուրս էլած կը բացագանչէ

«Դու լոկ սրբոյն Աստուծոյ և ճշմարտին քաջ
լարժան»

«Wortiest of Cod, the holy and the holy»

Անա Պայրընեան քերթութեան նկարագրե-
ականութիւն և զգացման պայծառ արտայայ-
տութիւն. մտածութիւն՝ խոր ու վեհ. իրական
նութիւն կենդանի և չքնաղ. կրօնը՝ միշտ վեր
ու բարձր. երանի թէ հայ քերթողն ալ այս
ձիրքերով օժտուէր:

Անշուշտ մեծ քերթողին մահուան դարադար-
ձին առթիւ կ'արժէր ընդարձակ ուսումնասիրու-
թիւն և վերլուծութիւն մը տալ Հանդիսիս մէջ
անոր երկերուն. սակայն եւրոպական մամուլը
կարծեմ լիովին զոհացում պիտի տայ այս մա-
սին. այսչափ կարեւոր իր ըսել, մասնաւորա-
պէս Ս. Ղազարու պաշտօնաթերթին, քանի որ
մեծ առիթն և հանգէտը, Լորտ Պայրընի անձը
այնքան անձուկ և մտերիմ ազեղս ունէր Միւխ-
թարեան Միաբանութեան հետ:

Հ. ԵՂԻԱ ՓԵՆԵԼՅԱՆ

